600.0209.11.07.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

11 հուլիսի 2016 թվականի №209Ա
ք. Երևան

«ԱԿԻՆՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0181 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԱԿԻՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի հուլիսի 6-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի սեպտեմբերի 30-ի «ԱԿԻՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ծաղկավան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորություն) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №133Ա որոշմամբ «ԱԿԻՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Ծաղկավան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0181 լիցենզիան՝ «Հասցեն» տողը շարադրելով նոր խմբագրությամբ.

   «Գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նոր Արեշ 30 փողոց, 14/1»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
11 հուլիսի 2016
Ժամը 16[00]